# ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՌ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻ ԵՐԿՐՈՐԴԸ ԵՎ ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՋՈՐՋ ՔԵՐՐԻՆ ԻՐԵՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԵՆ ՀԱՅՏՆՈՒՄ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԿԱԼՎԱԾՔԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հապուկ գրություն էր առաքվել քույր Եկեղեցիների հովվապետերին՝ կապված Երուսաղեմի Հայոց Պատրիարքությանը պատկանող «Պարոն Տեր» կալվածքի շուրջ ծագած խնդիրներին:

Ի պատասխան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նամակի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ստացվել են Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ի և Քենթրբերիի Արքեպիսկոպոս Ջորջ Քերրիի նամակները:

Երկու Եկեղեցիների հոգևոր պետերն իրենց մտահոգությունն ու անհանգստությունն են կիսում Վեհափառ Հայրապետի հետ՝ հայտնելով իրենց պատրաստակամությունը զորակցելու և աջակցելու խնդրի բարվոք լուծմանը:

*21 օգոստոսի 2002 թ.*

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*